ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ

«04» 11 2015թ. Թիվ 1/8294

Երևան

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն 2015 թվականի հոկտեմբերի 12-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել

- 10.000 հատ, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 2 տարի շրջանառելիության ժամկետով, 9,5% տարեկան անվանական տոկոսադրույքով, արժեկտրոնների կիսամյակային վճարմամբ,
- 10.000 հատ, 10.000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 1 տարի շրջանառելիության ժամկետով, 15% տարեկան անվանական տոկոսադրույքով, արժեկտրոնների եռամսյակային վճարմամբ արժեկտրոնային պարտատոմսերի ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2015 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 48 արձանագրություն)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գրանցել «Գլոբալ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված.

- 10000 հատ, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 2 տարի շրջանառելիության ժամկետով, 9,5% տարեկան անվանական

ՀԱՅԱՍՏԱՆ
ОТДЕЛ ПО УЧЕТУ
ПЕРСОНАЛА
PERSONNEL
RECORDS
DIVISION

տոկոսադրույքով, արժեկտրոնների կիսամյակային վճարմամբ,

- 10000 հատ, 10000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 1 տարի շրջանառելիության ժամկետով, 15% տարեկան անվանական տոկոսադրույքով, արժեկտրոնների եռամսյակային վճարմամբ արժեկտրոնային պարտատոմսերի ազդագիրը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

/ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺԻՆ
ОТДЕЛ ПО УЧЕТУ ПЕРСОНАЛА
PERSONNEL RECORDS DIVISION
CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA